# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» փետրվարի 2026թ. N ՄՈ/95-Ա

ք. Արմավիր

### «ԱՐԱԶԱՓԻ Թ. ՀՈՒՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի փետրվարի 17-ի N ՄՈ/92-Ա որոշումը, «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Բազոյան Արևիկին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2026 թվականի փետրվարի 18-ի
N ՄՈ/ 95 -Ա որոշման

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Հակոբյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ

**Անդամներ՝**

Ս.Սաֆարյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Ա.Վասիլյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**
Լ. Գալստյան - «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց » պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**
Չ. Կարապետյան - «Արազափի Թ. Հուրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ